Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի տնօրեն,
քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ
Է.Հ. Օրդուխանյան

«21» նոյեմբերի 2023 թ.

Առաջատար կազմակերպության կարծիքը

Մարիամ Ռոմանի Բաղդասարյանի
«Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների քրեաիրվական բնութագիրը և որակման հիմնախնդիրները» թեմայով
ԺԲ.00.05- «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ
թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Առաջատար կազմակերպությանը ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը նվիրված է առանձին դաժանությամբ կատարված սպանությունների քրեաիրավական բնութագրին և որակման հիմնախնդիրների վերաբերյալ համակողմանի ուսումնասիրությանը:

Գրախոսվող ատենախոսական աշխատանքի իրականացման արդիականությունը պայմանավորված է նրանով, որ առանձին դաժանությամբ կատարած սպանությունների հանրորեն վտանգավորությունն առավել բարձր է իր էությամբ և էական վնաս է հասցնում ոչ միայն կոնկրետ անձանց, այլև ողջ հասարակությանը և պետության անվտանգությանը: Այս առումով նշված հանցագործության դեմ պայքարը եղել և շարունակում է մնալ հայոց պետականության առաջնահերթություններից մեկը, որի արդյունավետ լուծումը պայմանավորված է նաև գործող քրեական օրենսդրության կատարելագործման, իրավակիրառ պրակտիկայի բարելավման խնդիրներով:

Այս առումով, ինչպես իրավացիորեն նշում է քննարկվող աշխատանքի հեղինակը, «առանձնակի կարևորվում է ծանրացնող հանգամանքներում կատարվող

սպանությունների, մասնավորապես՝ առանձին դաժանությամբ կատարված սպանությունների գիտական վերլուծությունը» (Ատենախոսություն, էջ 3)

Գրախոսվող աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածական մասում հեղինակը հիմնավորում է թեմայի ընտրության և հետազոտության արդիականությունը, գիտական մշակվածության աստիճանը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացված դրույթները, աշխատանքի տեսական և գիտական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլխում հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկել առանձին դաժանությամբ կատարված սպանությունների պատմական զարգացման հիմնական ուղղությունները:

Աշխատանքի երկրորդ գլխում, հեղինակը պատշաճ գիտական խորությամբ քննարկել է առանձին դաժանությամբ կատարված սպանությունների օբյեկտիվ կողմի բնութագրական հատկանիշները:

Քննարկվող աշխատանքի երրորդ գլխում, հեղինակը համակողմանի դիտարկել է առանձին դաժանությամբ կատարված սպանությունների սուբյեկտիվ հատկանիշները:

Աշխատանքի եզրափակիչ մասում կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա հեղինակը ձևակերպել է հետևություններ և եզրակացություններ, որոնք ունեն ոչ միայն գիտական, այլև զգալի գործնական-առարկայական նշանակություն:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով աշխատանքը, ունենք որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

Առաջին, աշխատանքի գիտական նորույթը ներկայացված է առավել ընդհանրական գծերով, մինչդեռ աշխատանքի բովանդակությունը պարունակում է կոնկրետ տեսական և գործնական բնույթի դրույթներ և առաջարկություններ, որոնք կարող էին իրենց համապատասխան ձևակերպումները գտնեին գիտական նորույթի դրվագում:

Երկրորդ, աշխատանքում հիմնականում օգտագործվել է խորհրդային և ռուսական դատական պրակտիկայի նյութերը, իսկ ազգային դատարանի նյութերը օգտագործվել են միայն հինգ դրվագում: Սա այն դեպքում, երբ հրապարակի վրա

են ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների և որոշումների տասնյակ հատորներ, որոնցում բավարար քանակ են կազմում նաև աշխատանքի թեմային վերաբերվող իրավական դիրքորոշումները, որոնց օգտագործումը ավելի բովանդակալից կդարձնեին աշխատանքի բովանդակությունը:

Սակայն նշված նկատառումները բոլորովին չեն նսեմացնում աշխատանքի դրական արժանիքները:

Աշխատանքի բովանդակության հիմնական դրույթները լիարժեքորեն են արտացոլված սեղմագրում և հեղինակի գիտական հոդվածներում:

Աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական բաժնի 2023 թվականի նոյեմբերի 14-ի նիստում, որում ներկա էին իրավաբանական գիտությունների դոկտոր-պրոֆեսորներ՝ Հ.Մ. Ստեփանյանը, Գ.Հ. Սաֆարյանը,ավագ գիտաշխատողներ, իրավագիտության թեկնածուներ՝ Լ.Ա.Ղազանչյանը և Ա.Վ. Շուքուրյանը:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ Մարիամ Ռոմանի Բաղդասարյանի «Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների քրեաիրավական բնութագիրը և որակման հիմնախնդիրները» թեմայով ԺԲ.00.05 մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ավարտուն հետազոտություն է, այն լիովին համապատասխանում է ԲՈԿ-ի Կանոնակարգի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի պետաիրավական
հետազոտությունների բաժնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ **Հովի.Ստեփանյան**

Պրոֆեսոր Հովհաննես Միքայելի Ստեփանյանի
ստորագրությունը հաստատում եմ
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու Հայկ Նազարյան